

## Հասմիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

### Ա.ԲՐՈՒՏՅԱՆԸ ԵՎ ՇԻՐԱԿԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

Շիրակի երաժշտական ժառանգությունը XIX-XX դդ. իր բացառիկ կարևոր տեղն ու դերն ունի հայ ազգային երաժշտական արվեստի զարգացման մեջ: Ժողովրդական հարուստ երաժշտական բանահյուսությունը, որ ներծծված էր Արևմտյան Հայաստանի երաժշտական բարբառներից ծնված ժանրային-ոճական առանձնահատկություններով, հիմք հանդիսացավ բանավոր ավանդույթի պրոֆեսիոնալ երաժշտության անմախաղեպ վերելքի ու մեծարժեք ժառանգության ստեղծման համար: Շիրակի հայ աշուղների ու սազանդարների ծաղկուն արվեստը սկսած XIX դ. երկրորդ կեսից հետաքրքրել է հայ բանագետներին ու երաժիշտ-ֆոլկլորագետներին: Կոմիտասը, Ալ.Մխիթարյանը, Ա.Բրուտյանը, Ն.Տիգրանյանը, Սպ.Մելիքյանը, Ա.Քոչարյանը, Բ.Քուչարյանը, Ռ.Աթայանը, Մ.Բրուտյանը ոչ միայն հավաքել ու համակարգել, այլև բարձր չափանիշներով են արժեքավորել այս ժառանգությունը:

«Մի կողմից հայ բազմատարր ազգային դիմագծի բացարձակ գերիշխանությունը, մյուս կողմից ազգային փոքրամասնությունների ինքնատիպ մշակութային դրսևորումներն ու դրանց փոխհարաբերությունները աստիճանաբար ձևավորեցին մի նոր հայկական քաղաքային ինքնատիպ մշակութային կյանք, որն արդեն XIX դարի վերջին բնութագրվում էր իր կայուն ու ինքնատիպ ավանդույթներով: Աստիճանաբար քաղաքային կենցաղում կայունացավ երգ-երաժշտության բազմաժանր մի համակարգ՝ XX դ. սկզբում ձեռք բերելով երաժշտատոճական տեղային հատկանիշներ»:<sup>1</sup>

Ալեքսանդրապոլը XIX դարի երկրորդ կեսի հայ մշակույթի կարևոր կենտրոններից մեկն էր: Ազգային ոգով զարթոնք էին ապրում կյանքի գրեթե բոլոր ոլորտները: Հատկապես նշանակալի ու ազդեցիկ էր հասարակական-քաղաքական կյանքի ազգային նոր հողի վրա զարգացման գործընթացը, որն ասես իր ետևից տանում էր քաղաքային մշակույթի մյուս ոլորտները:

«Սա մի ժամանակահատված էր, երբ տնտեսական զարգացմամբ, հոգևոր-հասարակական, կրթական գործիչների նվիրյալ աշխատանքով պայմանավորված՝ Ալեքսանդրապոլում աշխուժացավ հասարակական կյանքը, ազգային վերածնության գաղափարներով տոգորված բարեգործական-մշակութային ընկերությունները հետզհետե վերածվեցին ազատագրական խմբակների: 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմի ականատես և մասնակից, իր վիճակի բարելավման սպասումներով հուսավատ հայ ժողովուրդը բախվեց միջազգային հանրության հաշվենկատ վերաբերմունքին և հաստատակամորեն կանգնեց իր սեփական ուժով ազատագրվելու դժվարին ճանապարհին»:<sup>2</sup>

Երաժշտական կյանքը քաղաքում դրսևորվում էր բազմակերպ. ժողովրդական երգ, աշուղական երգ ու նվագ, կոմպոզիտորական երաժշտություն և այլն: Երաժշտությունը համահնչուն էր մշակութային բարեփոխումների մտքին ու ոգուն, ավելին, այն հաճախ ուղղորդում էր բարեշրջուն գործընթացները՝ մարդկանց միավորելու և համախմբելու իր զորավոր ուժով: Այս երևույթը նաև տաղանդավոր երաժիշտների գործունեության արգասիքն էր, նրանց բազմակողմ որոնումների, հայտնագործությունների և ժամանակին համաքայլ ստեղծագործելու արդյունքը:

<sup>1</sup> Հարությունյան Հ., Ալեքսանդրապոլի երաժշտական կյանքը, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ.11, Եր., 2009, էջ 78:

<sup>2</sup> Գ.Այվազյան, Ալեքսանդրապոլի հասարակական-քաղաքական կյանքը XIX դարի 60-80թթ., ատենախոսության սեղմագիր, Եր., 2010, էջ 4:

Այս ժամանակաշրջանում ասպարեզ եկավ մի արվեստագետ, որի կյանքն ու ստեղծագործությունը անջնջելի հետք թողեցին Ալեքսանդրապոլի մշակութային կյանքում: Բազմաշնորհ, բազմաքանքար այդ գործիչը Արշակ Բրուտյանն էր, որին հարագատ քաղաքում ավելի շատ ճանաչում ու սիրում էին որպես երաժշտության ուսուցիչ, քանզի նա աշխատել էր քաղաքի գրեթե բոլոր կրթական հաստատություններում: Սակայն նրա հետաքրքրությունների անչափ լայն շրջանակն ընդգրկեց մասնագիտական գործունեության տարբեր ուղիներ, որոնք հավասարազոր արժեքավոր եղան հայ ազգային մշակույթի համար:

Ա.Բրուտյանը ծնվել էր 1864 թվականին ներկայիս Քարաբերդ (նախկին Դաշղալա) գյուղում: Ընտանիքի ակունքները հայոց Մուշ գավառից էին:

1876 թվականին նա զերազանց առաջադիմությամբ ավարտում է Դևիչադ գյուղի Հառիճի ընկերության ժառանգավորաց դպրոցը և ուսումը շարունակում է Սբ Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Այստեղ դարձյալ փայլուն առաջադիմությամբ ուսումնառություն ստանալուց հետո, 1888 թվականին նա վերադառնում է Ալեքսանդրապոլ:

Ա.Բրուտյանի անձնական արխիվում, որը գտնվում է Ե.Չարենցի անվան զբաղմունքային և արվեստի թանգարանում, պահպանվում է մի յուրահատուկ փաստաթուղթ, վկայագիր, որը գրվել է Մեծն Կոմիտասի ձեռամբ՝ հավաստելով այն մասին, որ Ա.Բրուտյանը լավագույնս տիրապետում է եվրոպական և հայկական նոր նոտագրությունների համակարգին, ինչի շնորհիվ կարող է դասավանդել Ալեքսանդրապոլի Սբ Աստվածածին եկեղեցու Վիճակային դպրոցում:<sup>3</sup>

Կարելի է ասել, որ Ա.Բրուտյանն իր ողջ կյանքը հիմնականում նվիրել է մանկավարժությանը, դասավանդել է Ալեքսանդրապոլի գրեթե բոլոր ուսումնական հաստատություններում: Նա դասավանդել է ազգային երգ-երաժշտություն, որն այն տարիներին բոլորովին նոր իմաստավորման, «արդիականացման» բարդ ու պատասխանատու փուլի մեջ էր, քանզի՝ «Ալեքսանդրապոլի ազգային-հասարակական կյանքի զարկերակը բարբախտում էր դպրոցներում: Տվյալ ժամանակահատվածում «քծախնդիր» ընտրությամբ ձևավորվեցին երկսեռ դպրոցների ուսուցչական խմբերը: Նրանցում համախմբվեցին տաղանդավոր ուսուցիչներ (Ս.Բեկնաբայան, Ղ.Աղայան, Հ.Ղուկասյան և ուրիշներ): ... Ուսուցման ընթացքում իրենց կիրառած ժամանակակից մեթոդներով, նյութի դյուրամարս մատուցմամբ, հեղինակած դասագրքերով նրանք թարմություն մտցրին հայ մանկավարժության մեջ: ... Նրանք ձևավորեցին իրենց առաջադիմական նկարագրին բնորոշ հասարակական միջավայր»<sup>4</sup>:

Սակայն կար գործունեության ևս մեկ ոլորտ, որը թանկ ու նվիրական էր Ա.Բրուտյանի համար: Դա բանահավաքչական աշխատանքն էր, որն իր ժամանակի չափանիշներով պետք է գնահատել որպես բացառիկ արժեքավոր ու առաջադիմական: Ժողովրդական երգը որպես մնայուն արժեք իր կայուն տեղը զբաղեցրեց խորը մտավորականի բազմաոլորտ զբամունքների մեջ: Այսօր նրա ջանքերի շնորհիվ հնարավոր է ուրույն պատկերացում կազմել Շիրակի ժողովրդական երգարվեստի բնորոշիչների մասին: Այս առումով Շիրակը բավական խայտաբղետ ու բազմաճ երգային մշակույթի կրող էր:

Հիշենք, որ ժողովրդական երգը, իր ամենատարբեր ժանրային դրսևորումներով, անչափ սիրված էր քաղաքում: Արևմտյան Հայաստանից ներգաղթածները, որ երգային խորը ավանդույթներ կրողներ էին, իրենց կենցաղում պահպանում էին այդ ժառանգությունը: «Խնուս գեղի մեջտեղը», «Ես Կոստոն եմ Բայազետցի», «Գնաց

<sup>3</sup> Ե.Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարան, Արշակ Բրուտյանի ֆոնդ, ք.22:

<sup>4</sup> Բրուտյան Ա., Ռանկական սրմունջներ, Եր., 1985, էջ 14:

աշուն՝ էկավ գյարուն», «Քյամբախ Բուլանդխ» երգերը դրանց լավագույն օրինակներից են:

Այս նույն միջավայրում հատուկ տեղ են գրավել հերոսական, ազգային-հայրենասիրական երգերը, որոնցից էին՝ «Զաջ Արաբոյի երգը», «Բայազետցի Կոստոյի երգը», «Էկավ հասավ Վանա ծովուն» (գովեստ գեներալ Արշակ Տեր-Ղուկասյանին), «Չայնը հնչեց Էրզրումեն» և այլն:

Ա.Բրուտյանի գրառումներում բացահայտվում է Շիրակյան ժողովրդական երգի ժանրային հարստությունը՝ օրորոցայինից՝ մինչև ազգային ազատագրականը:

Ալեքսանդրապոլի ժողովրդական երգ-երաժշտությունը պարարտ հող նախապատրաստեց բանավոր ավանդույթի պրոֆեսիոնալ երաժշտության՝ աշուղական ու սազանդարական արվեստի զարգացման համար: Աշուղները քաղաքի երաժշտական կյանքի անբաժան մասն էին: Նրանք մշտական մասնակիցներն էին ընտանեկան հավաքույթների ու խնջույքների, հարսանիքների և այլ հավաքների:

Բնականաբար, երաժշտագետի ուշադրությունից չէին կարող վրիպել ժողովրդական ակունքներից ձևավորված հայ աշուղական երգերի արժեքավոր նմուշները, որոնք այնքան խնամքով են ժողովված Ա.Բրուտյանի գրառումներում: Նա անդրադարձել է այնպիսի համբավավոր աշուղների գործերին, ինչպիսիք էին Չահրին, Ղեյրաթին, Ջամալին, Ֆիզահին, Ֆահրատը, Պայծառեն և այլք: Նրանց բազմաթիվ երգերը հնչում էին մալ սրճարաններում: Այստեղ էլ տեղի էին ունենում ավանդական մրցույթները, որոնք երբեմն մի յուրահատուկ ներկայացման էին վերածվում:

Դատելով նրա բուռն գործունեության բազմադրոս ու բազմածավալ դրսևորումներից, հայ ազգային երաժշտության թե՛ դասավանդման, թե՛ մշակման նրա սկզբունքներից, վստահորեն կարելի է խոսել նրա ու Կոմիտաս վարդապետի հոգևոր մտերմության, համախոհության ու «զինակցության» մասին:

Ալեքսանդրապոլի դպրոցներում երաժշտական դասավանդման սկզբունքային քայլերից մեկը տարասեռ երգչախմբերի կազմակերպումն ու հրապարակային համերգներին մասնակցությունն էր: Ինչպես իրավացիորեն մշում է երաժշտագետ Մարգարիտ Բրուտյանը. «Ա.Բրուտյանը Ալեքսանդրապոլում սկիզբ է դրել հրապարակային ժողովրդական համերգների, առաջինը բեմ բարձրացել ազգային տարազներ կրող իր խմբերով և, ամենակարևորը, նպաստել է քառածայն երգեցողության տարածմանը: Նա հայ երաժշտական կյանքում բազմաձայնություն սերմանող ու տարածող առաջին գործիչներից էր»<sup>5</sup>:

Այս առումով քաղաքի երաժշտական կյանքում մեծ բեկում էր մտցրել Քրիստափոր Կարա-Մուրզան, որի ելույթները 1891 թվականին մեծ ոգևորություն էր առաջացրել: Ահա Ա.Բրուտյանը առավել ոգեշնչվողներից մեկն էր, որը շարունակեց Զ.Կարա-Մուրզայի ազգանպաստ գործը: Այդպիսով նա համարվում է Ալեքսանդրապոլի երաժշտական կյանքում նոր հնչողություն և ազդակ տվողը՝ երգչախմբային արվեստի նվիրյալ պրոպագանդողի իր անձնուրաց գործունեությամբ: Որպես սիրողական երկսեռ երգչախմբերի վարպետ ղեկավար, նրա երաժշտամանկավարժական գործունեության ոլորտը կազմեց խմբավարի անձնուրաց աշխատանքը:

Ըստ ժամանակակիցների վկայությունների, թե՛ Զ.Կարա-Մուրզայի և թե՛ Կոմիտասի Ալեքսանդրապոլյան համերգներին մասնակցել են Ա.Բրուտյանի երգեցիկ խմբերը: Նա ինքը բազմիցս կազմակերպել է հրապարակային համերգներ, որին մասնակցելու է հրավիրել քաղաքի համբավավոր երաժիշտներին: Այսօր էլ պահպանվում են բազմաթիվ համերգային ազդագրեր ու հրավիրատոմսեր այդ համերգներից:

<sup>5</sup> *Բրուտյան Ա., Ռամկական մրմունջներ, Եր., 1985, էջ 9:*

Գժվար է գերազնահատել Ա.Բրուտյանի քանահավաքչական, մանկավարժական, խմբավարական և համերգային գործունեության դերն ու նշանակությունը Ալեքսանդրապոլի մշակութային կյանքում: Դա լեցուն ու ազգանպաստ գործ էր, որն անգնահատելի դեր կատարեց քաղաքի մշակութային կյանքում:

#### А.БРУТЯН И МУЗЫКАЛЬНАЯ ЖИЗНЬ ШИРАКА

\_\_\_ *Резюме* \_\_\_

\_\_\_ *А. Арутюнян* \_\_\_

Трудно переоценить значение деятельности и творчества Аршака Брутяна - видного общественного деятеля, педагога, фольклориста, музыканта. Всю свою жизнь он посвятил культурному процветанию Ширака и особенно города Александрополя. Глубоко образованная личность, носитель передовых национальных идей и идеалов, Брутян внес неоценимый вклад в изучении музыкального народного творчества и в развитие армянской музыкально-просветительской жизни.